

ՅԱՐԳՈՅ ԱԶԳԱՅԻՆԻՔ

Փառք զիտուածան հրաշից վեհապարտ՝ մեզ  
 Ախոյցիայ Հայ օրիորդներուս նուիրողին: Փառք  
 այս յաւերժական յիշատակարանս մեզ համար  
 կառուցանել տուող անմահ բարերարին: Փառք  
 արի և անկուռ հովուին, որոյ նուիրական ջանիք  
 փառաւոր շինուածս զլիաւորեցաւ, որոյ նաւակա-  
 տեաց հանդիսին վերայ այսօր կ'զուրգուրամք ա-  
 մէնքս իրեն մէջ միմեանց հաւասար խնդակցու-  
 թեամբս:

Մեր աշակերտուհիք ամէնքս կ'մաղթեմք Աս-  
 տուծմէ Նորին Աւհափառութեան Տ. Տ. Գեորգե-  
 ական Գ.ի Վաթուղկոսի ամենայն Հայոց անգին  
 կենաց երկարութեանը համար, որ բարեհաճեցաւ  
 շնորհել ուսմանարանիս բաց տեղը, քաղաքիս օրի-  
 որդաց անուսով մեր, և այստեղ շնորհ մեր ամէն  
 ազգային քայրերու ծնողներուն: Վմաղթեմք ի  
 Փրկչէն բոլորեցունցս կարկառել ձեռն օգնակա-  
 նութեան իւր ամէն գործոցը մէջ Նորին բարձրա-  
 պատուութեան փոխ — առաջնորդ Հօր մերում, ո-  
 որոյ ազգասէր յորդորմամբը և իւր աջակից ազգա-  
 յիներու նուիրական գործակալութեամբը շին-  
 ուածս զլիաւորեցաւ: Վմաղթեմք Աստուծմէ յա-  
 մենայն տեղիս յաջողութիւն գործոց և առաքի-  
 նի և Աստուածահաճոյ կենոք արեւշատութիւն այն  
 բարերարներուն, որոց նուիրաբերութիւններովը  
 ասոր նիւթական շէնքին պէտքերը պատրաստուե-  
 ցաւ: Մեր այս խորին երախտադիտութեան բարե-  
 մաղթութիւնը, Նորին Աւհափառութեան քաղ-  
 ցըր սրտն ըղիսած առատաձեռնութեանը և Նո-  
 րին բարձրապատուութեան նուիրական սպասա-  
 ւորութեանը և ձեր ի ճակատոյ հոսեալ քրք-  
 տանց արգիւնն է, զոր կ'նուիրեմք մեր սրտի խո-  
 րերէն այժմ իրրե հասարակաց բարիքը մտածող  
 ազգային բարերարներու:

Չկայ աշխարհիս մէջ հասարակաց աւելի օգ-  
 տակար բարիք մը քան այսպիսի բարերարու-  
 թիւն մը, որոյ հետքն յաւիտեան պիտի չջնջուի  
 մեր սրտերէն, պիտի փոխանցեմք այս աւուր  
 յիշատակը մեր մարտիւթեան օրօրօցներէն ապա-  
 զայ սերնդոց ալ զայն դարեդար բարեհամբաւե-  
 լու համար: լիայոյս լինելով որ այսուհետեւ ալ  
 ասոր յարատեւութեանը պէտք եղածներուն դուք  
 ամենքդ իւր կողմանէ շինայէք ձեռն օժանդա-  
 կութեան ասոր կարկառելու:

Իսոյց թէ ի՞նչպէս. — մեր կարծիքն այս է,  
 պէտք է ասոր յառաջադիմութեանը համար մի  
 անգամ ընդ միշտ ձեռքէ եկածը շինայիլ: ամէն  
 դժուարութեանց տանել, ամէն նեղութիւններու  
 համբերիլ: ամէն անձնական խնդիրներէ ազատ և  
 հեռու պահել զայս և քաղցր աչօք նայիլ ասոր  
 վերայ և նոյն իսկ այնպիսիներուն աշխատել  
 միտքը քաղաքակրթութեամբ լուսաւորել: որով  
 ձեր փափաքածին կ'հասնիք և չնն կրնար եղծել  
 ասոր բարեկարգութիւնն ու իսափանել յառաջ-

նթացութիւնը: Ընդդիմադիր հակամիտութիւնը-  
 բամէնն ալ կ'տկարանան, որչափ ալ զայնս զօ-  
 բացուցած լինին տգիտութիւնքն և նախապա-  
 պաշարմունքը:

Ահա այս է մեր և համայն բարոյական մար-  
 ոց սրբաշան պարտքը և հետեւապէս ուսումնա-  
 դանիս անյողողդ յարատեւութեան միակ միջոցը  
 ըր ի յերկնուստ անտի զայ առ մեզ, այն է,  
 ո՞քր, ,, Զի զուգութիւն է մայր բարեաց . . . և  
 սէր սուրբ միարան օգտից:

Պատրաստ աշակերտուհի թաղանթի Մա-  
 միկանեանց ի դիմաց ամենայն աշակեր-  
 րուհեաց Լիդիա Բլեխան աստուծանա-  
 բանին օրհնորդաց Հայոց Ախոյցիայ:

Ի 42 Գ.ի. 1871 թ.

Ա. Բ. Ե. Կ. Ս. Պ. Ռ. Տ. Վ. Յ. Ը. Թ. Կ. Ս. Պ. Ռ. Տ.

ԳՊԲԷՎԱՆՔ ԵՐՆՁԱԿՈՒ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ

ՎԱՆՈՒՑ

(Ե. Բ. Ե. Կ. Ս. Պ. Ռ. Տ. Վ. Յ. Ը. Թ. Կ. Ս. Պ. Ռ. Տ.)

Արդ հարկաւոր է աստ խոստովանել թէ մեզ-  
 նից շատ բարձր ազգաց մէջ կրօնէն առաւել օ-  
 րէնքները և լեզուն բարձրագոյն տեղ կրօնեն,  
 որոնք են հաստատութիւն մտացական և նիւ-  
 թական լուսաւորութեան: Սակայն մեզ համար  
 այս ուղիւ հետեւել գէթ արդի ժամանակին դիա-  
 մամբ նկատելով ըստ ինձ խոհականութիւն չէր  
 համարուիր, ըստ որում մեր գոյութիւնը առա-  
 ւել կրօնի վերայ է հիմնած քան թէ օրինաց և  
 լեզուի, որոնց առաջինը բոլորովին չունենք: իսկ  
 երկրորդը զեռ մանուկ է:

Այսպէս եթէ մեզ համար ամեն բանէն վեհմ  
 է կրօնը, բնէ է թէ հովիւները հօտերէն առա-  
 ւել կամ ուրիշ խօսքով ասելք հոգեւորականք  
 աշխարհականացմէ աւելի պիտի ըլլան Հայաս-  
 տանեայց եկեղեցոյ Հոգևոր և մարմնաւոր որդոց  
 օրինաւորապէս առաջ վարողները: Իսկ մենք  
 մարմնաւորներս այժմ ամեն բանէն առաւել մեր  
 հոգեկան և մարմնական երջանկութեան համար  
 պէտք են կրօնի վերայ յենուլ: Այս միտքը, նա-  
 յիլով մերոնց շրջապատեալ արդի պարագաներին  
 այնպիսի մի ճշմարտութիւն է, զոր ոչ մի նիր-  
 հուն և բանիմաց չկրնար հերքիլ: Այս կէտէն  
 առատ և արդիւնաւոր արդիւնքներ քաղելու և  
 մեր ազգայնութեան շինուածքը յուսալի ապա-  
 զայի մը վրայ կանգնացնելու համար, մեծ ուշք և  
 միտք պիտոյ է դարձնել մեր հոգեկան լուսաւո-  
 րութեան վերայ, որ Հայի ամենէն հաստատուն  
 նեցուկն է: Հայ ազգ ասելով մենք աւելի կ'հաս-  
 կանանք զիղացիք քան թէ քաղաքացիք, որոնք

Հայութեան խարխիսն են: Ահաւասիկ զորանց բարոյական լուսաւորութեամբ զարգացնելու համար մեծ և մեծ նշանակութիւն կարող են ունենայ մեր այժմէն ունեցած մենաստանները, որոնք հին դարին մէջ Հայկական կրօնական լուսաւորութեան ասպարիզին մէջ մեծ տեղ են բռնած: Այս այսպէս ըլլալը երբ մենք ունէինք քաղաքական կեանք՝ ըստ ինձ այնքան նշանակութիւն չունէր, որքան մեր այժմէն գրութեան նկատմամբ ունի և պիտի ունենայ: Զարգիս հին ատենէն առաւել հարկ է իւրաքանչիւր Հայ՝ վանքերի հետեւապէս Հայաստանեայց եկեղեցւոյ հովանու տակէն հեռանալու, Հայկական եկեղեցւոյ նուիրապետական դասի վերառուիչ ներքեւէն ի բաց մեկնելու՝ վախենայ և սոսկայ, այնպէս ինչպէս ոչխարը իւր ապահով փարախէն: Սակայն և հովիւներուն վերայ ալ պարտք կայ հասկանալ աղէկ կերպով մեր Երկնային Վարդապետի այս վսեմ՝ խօսքերի նշանակութիւնը թէ՛ «Ես եմ հովիւն քաջ հովիւն քաջ զնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց. իսկ վարձկանն, որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրև տեսանէ զգայն զն գայ, թողու զոչխարսն և փախչի, քանզի վարձկան է և չէ փութ նմա վասն ոչխարաց»:

Արդ՝ մի հօտ երբ այս բարձրագոյն խօսքերի նշանակութիւնը աղէկ ըմբռնող հովուաց ձեռաց տակ կտածուի. նորանից ալ ոչ մի կողմէն վտանգի երկիւղ և ահ չմնար: Մեր նախնեաց այնքան փոթորիկներէն զերծնելնին, իրանց հովիւների այս կէտը քաջ հասկանալուն ենք պարտական: Իսկ այդ հովիւների զարգացման մասին Հայաստանեայց վանքերէն զոհ և շնորհակալ պիտի ըլլանք: Այն նրանք (վանքերը) էին որ հին դարերին մէջ մերոնց մէջ կրօնական կրթութիւն արժարձելու կձառայէին. մեզ բարոյական սերտ կապերով առ միմեանս մերձեցնելու ջանք և ճիգ կ'ընէին. կարճ ասելով՝ որչափ մեր քաղաքական կեանքը մեղմանար և ցածնար. նոյնչափ բարոյականը կ'աճեցնէին և կ'արձրացնէին: Յարի սորանց հետ այն հանգամանքը թէ նորանց քրիստոնէական սուրբ սիրով վառեալ վահանները կուզեմ՝ ասել միաբանութիւնքը եկեղեցւոյն համար մեծամեծ հարստութիւնք զիջելով շատ անգամ՝ յօգուտ ազգի երկու զխաւոր նպատակի կձառայեցնէին: Մէկ մը զանազան ժամանակներ Ասիոյ մէջ անգութ, ընչասէր բռնաւորներ յայտնուելիս, որոնք պատրաստ էին ամենայն ժամանակ Հայ ժողովրդին սրի ճարակ անելով՝ նորան ամեն բանը իրանց անդրամութեան զոհ անել, նոցա աչքը վանուց հարստութենէն յագեցնելով ճանապարհ կ'զգէին: Մէկ ալ ազգը այլ և այլ ժամանակ զերութենէն աղատելու համար ճգնելիս նիւթապէս օգնութեան ձեռք կ'կարկռուէին, Իսկ այժմ՝ նորէն կ'կրկնեմ նորանք (վանքերը) ըստ ինձ արդի քաղաքականութեան շատ կէտերով կարող են մեզ նպաստամատոյց ըլլալ:

Եթէ մենք ընդհանուր առմամբ հասկանալը նոցա վսեմութիւնը, պիտանաւորութիւնը, եթէ մենք մէկ կողմը թողած առանձնականութիւնը (ИНДИВИДУАЛЬНОСТЬ) ընկերականութիւնը կը հասկանալը կ'յարգենք և կ'սիրենք իր ընդարձակ նշանակութեամբ:

Չեմ գիտեր երբ պիտոյ է մենք կատարեալ կերպով զարթնելք մեր թմբութենէն. երբ հարկաւոր է Հայաստանեայց եկեղեցւոյ հոգևոր և մարմնաւոր զուակներս օրինաւոր կերպով միմեանց հետ յօգուելով և յարակցուելով մեզ փրկող և զերծուցանող կէտերուն վերայ քաջ ձևով խորհէինք: Երևի այն ժամանակը կ'կամենանք այդ առնել, երբ արդէն մեր տնով տեղով կորած ու անհետացած կըլլանք մարդկութեան ովկիանոսին մէջ: Բայց ի՞նչ կասեմ այն ժամանակն ալ չէինք ըլլալ որ զգայինք և հասու ըլլայինք այս բաներին: Վայ ձեզ զգայուն սրտեր, որ դառնութեանց և վշտերու մէջ կայրիք և կը տապիր, նեղութեանց և տագնապների մէջ կհալիք, կմտնէք և կժխրիք: Վասնորոյ հազար անգամ վայ ձեզ, անզգայ անձներ որ ըլլալով պատկեր Արարչի նկար անասունների եղած էք, ըիւր անգամ անէճք այն վատ Հային, որ ունենալով միջոց իւր կեանքը յօգուտ իւր հասարակութեան անցկացնելու, շուայութեան, պորտաբռնութեան անհոգութեան և այլ անկարգութեանց մէջ կ'ողայ և կ'ողայ:

Արդ՝ այսօր մեր ունեցած այնքան վանքերէն ցաւ ի սիրտ կ'իշխմ թէ հաղիւ երկու երեքին կարող ենք մասնացոյց ըլլալ, որոնք քիչ թէ կձառայեն իւրեանց նպատակին: Մեր արդի հասարակաց Հօր կողմէն եղած ջանքերը և ճիգերը թէ զէպի այս և թէ ուրիշ կէտեր շատ և շատ մեծ են: Սակայն պիտոյ է ոչ երբէք մոռանալ թէ Մեծն Գրիգորիսին Տրդատ մը սատար եղած է. Սահակին և Մեսրոպին Վռաճապուհ մը նեցուկ էր. Յովսէփին և Ղևոնդին Վարդան մը նպաստամատոյց էր. Յովհան Մանդակունուն Վահան մը քաջակից էր: Մեր Վեհափառ Հայրը որչափ ալ աղէկ ճարպ ունենայ մեր սենեակներին լոյսին համար. անհրաժեշտ է յարաժամ ի մօտ ունենալ թէ պատրոյզը միշտ մենք ենք. եթէ մենք Հայերս կցանկանք թէ մեր մեծ Քահանայապետի բոլոր հոգացողութիւնները մեզ համար իր փրկարար արդիւնքները ունենայ. եթէ կուզենք որ մեր հասարակաց Հօր ցանած սերմերը մեզ համար առատ պտուղներ տայ, հարկաւոր է բոլորեքեանքս ըստ մեր կարողութեանց նորան ամեն մի սուրբ հրամանին անձնանուէր ըլլալ ճգնելք և Արարատին սուրբ Գահին հետ սերտ կերպով կաշկանդուելու հետամուտ ըլլալք: Սուրբ Եջմիածինը, Մեծն Գրիգորիսի սրբազան և նուիրական Գահը է միմիայն Հայի փրկութեան հիմքը և խորիստը, եթէ նա՝ (Հայր) զորան վսեմ նշանակութիւնը իր ընդարձակութեամբ հասկանայ՝ և

իւր օգոսին գործք դնել գիտննայ ամենայն օրինաւորութեամբ:

Արդ բաւ համարելով այս իմ քանի մը նկատմունքս ձեռքս կտանեմ՝ բուն իմ խնդիրքի թելը որը է Երնջակու սուրբ Արապետի հոգևոր զբարոց:

Թէ այս վանքը առանձին ձևով մեր նախնեաց ժամանակը ինչ նշանակութիւն է ունեցել իւր եպիսկոպոսական աթոռով, ո՞վ է յինչ ի՞նչ առիթներով, ի՞նչ ժամանակի և այլ այս կէտերին վերաբերուած պարագաները ես այժմ պիտի չկարողորեմ. գիտնալով թէ գորանք ուրիշ գրուածքի առարկայ և նիւթ, են հետեւապէս և այս յօդուածիս մտքէն դուրս: Աստի թողնելով գորանք հարկաւոր է ասել թէ այս վանքը, որուն շուրջ քան և հինգի չտի Հայ գիւղեր կան, եթէ ոչ կատարեալ գէթ միջակ ձևով իւր նպատակին եթէ ծառայէ՝ քիչ օգուտ չբերէր իւր շրջակայ Հայ հասարակութեան:

Մեր վանքերի համար եղած կարգադրութիւններէն, վանահարց արագ արագ փոխուելն իմ աչքին կրպչի. բստ որում այս պարագայից մէջ վանահայր շնայելով վանուց՝ ինչպէս իւրեանց սեպհականութեան վերայ, անկարգութիւններ կը ծագին: Այս կէտի վնասակարութիւնը նոյն իսկ մեր սուրբ հարք ալ աղէկ գիտնն և կրմբունեն: Ես սուրբ Էջմիածին գտնուելիս շատ անգամ նոսրանցմէ շատերը ինձ ասած են այս կէտի վնասակարութիւնը: Ի հարկէ աղիկ խորհելիս կտեսնես որ դժուար է մի վանուց պահպանուիլ մէկէն ի մէկ վանահօր յանձնել մինչև իրան մահը: Սակայն վանահայր քիչ բացառութեամբ իւրեանց կեանքը սուրբ Էջմիածին անցկազրած ըլլալովին հարկ էր որ հասկացուէր թէ որին պիտոյ էր և արժանի նշանակել այդ պաշտօնին, որին ոչ: Արքան ինձ յայտնի է մեր Մեծ Քահանայապետի սրտոսն աչքերուն չէ վրիպած իւր այնքան զբաղմանց մէջ այս կէտը ևս: Աստարեալ վստահութեամբ կասեմ թէ՛ շուտ սպառ սպուռ կվերանան այդ անկարգութիւնները:

Երնջակու սուրբ Արապետի վանքը Պարսից բռնութենէն Ռուսաց հովանաւորութեան տակ ընկնելիս գրեթէ կիսաւեր գրութեան ենթարկուած է եղեր, կամաց կամաց նորան նիւթական փիճակին մէջ մի կարևոր լուսութիւն մտած լինելով վերջապէս իրան վանահայր է ունեցել Երնջիայ անունով մի արժանաւոր հոգևորականի, որին հանգուցեալ ներսէս սրբազանը նշանակած է եղեր այդ պաշտօնին, և որ մինչև իւր մահը մնացել է մօտ 15 տարի: Իրաւ է այս արժանաւոր անձը մի ուսումնական վարդապետ չէ եղած, մինչև անգամ ասում են Հայկական լեզուն ալ շատ քիչ է իմացել. բստ որում սուրբ Էջմիածին զարգացած միաբաններէն ալ չէ եղած՝ որ գէթ այն տեղ ուսումնասիրած ըլլար Հայ լեզուն: Սակայն ճշմարտութիւնը կպահանջէ ասել որ նա

իւր գործքերով նախնեաց պատկեր է եղած զինքը վանքէն և վանքը իրմէն բնաւ չէ բաժանած. վանուց շուրջ եղած Հայ գիւղացիները ինձ ասացին թէ հանգուցեալը մահուան վրայիսօսք ըլլալիս կասէ եղեր թէ Կորդիք, ես իրրե քրիստոնեայ մահից բնաւ չեմ վախենար. սակայն կվախենամ թէ ինձնից յետոյ իմ տեղը այնպիսի մի անձը գայ, որ այս իմ սիրելի վանքը տակն ու վրայ առնէ: Այս պատուական հայրիկի գործունէութիւնը և դէպի վանքը ունեցած սէրը լաւ հասկանալու համար հարկաւոր է վանուց շուրջ եղած գիւղացոց խօսացնել. մինչև անգամ մահմետականք ակնածութեամբ կարտասանեն նորանունը:

Այսօր վանուց սեպհական ահագին հողերը, որոնք նորան գոյութեան զխաւոր աղբիւրն են. վանքին առաջին եղած ընդարձակ անտառը խաղողի և այլ մրգեղենեաց այգիները, ջրաղացները նորան յիշատակներն են: Անքի նորաչէն զանգակատունը, գաւթիւր, նոյն իսկ եկեղեցոյ կտուրի նորոգուիլը՝ ահագին խոհանոցի, անտեսատան, ամբարների, գոմերի, սեղանատան, ժառանգաւորաց դպրոցի մի ձեռք բաւականին շքեղ եռայարկ տան\*) շինութիւնները նորան ձեռքովն են եղած և ձգամբը կանգնած:

Եկեղեցոյ արդի զարդերից իրանց վերայ կկրեն նորան յիշատակը ետթը խաչ, մի բուռվար, մի բաժակածու, երկու քշոց, չորս թանկագին շապիկ, չորս շուրջառ, երեք ուրար, երկու սաղաւարտ, մի բաղմոց, երեք վարագոյր, վեց աշտանակ, մի կոնք իւր պիտոյքներով և այլ հարկ եղած իրերը: Տնտեսատան մէջ պէտք եղած բոլոր կարասիքը, վանքին համար հարկ եղած բաղմաթիւ մահիճներ, ներքնակներ, բարձեր, գորգեր, թաղիքներ, և այլ ամեն բան նորան ջանքովն են պատրաստուած: Վարձ ասելով վանուց կենդանութիւն տուողը հանգուցեալ Երնջիայ Հայրիկն է եղած:

Յիշատակն արգարոց օրհնութեամբ եղցի:

Երնջիայ Հայրիկի վախճանելէն յետ Մատթէոս որբազանի օրով այս վանքին վանահայր է նշանակուել Յովհաննէս վարդապետ Փեշտալճեալը . . . որ վերջապէս արդի Աեհափառ Հօր շնորհիւ զրկուեց իւր պաշտօնէն:

Այժմ այս վանքին վանահայր է Աեհափառ Հօր արդուն հսկողութեամբ և սուրբ կամօք արժանապատիւ Արիստակէս վարդապետ Սեթրակեանը, որուն քիչ թէ շատ դարուս յարմար լուսաւորութիւն և աղգիս պիտոյից համապատասխան դաստիարակութիւն ունենալը կյուսա-

(\*) Ախոստ որ այս շինութիւնը այժմ երեսն վերայ զցած է. որուն արդէն շատ տեղերը քարուրանդ է եղած: Կյուսանք Թէ վանքի արդի վանահայրը անուշադիր չճողնիր այդ տան նորոգիլը:

ցնեն թէ վանքը կամաց կամաց կզիմէ դէպի իւր նպատակը:

Ս. Հայր Արիստակէս՝ սուրբ Էջմիածին աւարտուած գիտութիւնը ստանալէն յետ, Գերապատիւ Եղիազար Արք Եպիսկոպոսի պաշտպանութեամբ և օյնութեամբ իւր ուսումը առաջ տարած է երբեմն Մոսկով, երբեմն ալ Վոստանդուպոլիս: Նա զարդիս պատրաստի ունի մի քանի աշխատութիւններ, որոնց ցանկը երբեմն հրատարակեց «Հայկական Աշխարհը», որոնց սեւերես աղքատութեան առիթով գուցէ չէ տպիլ տալիս:

Վեհափառ Հօր քաջալերութեամբ և պաշտպանութեամբ այժմ վանքին մէջ կայ մի դպրոց, ուր կուսանին երեսնի չափ երեխէք, որոնք վանքին խիստ մօտ եղած գիւղերէն են հաւաքուած: Աշակերտք բոլորն ալ երթեակ են, որ կզիշերեն վանքին առաջ եղած գիւղումը: Հետու գիւղերէն եկածներն մօտիկ գիւղի իրանց բարեկամների տնուումն կկենան:

Աշակերտների ուսման վարձն այնքան քիչ է, որ կարելի է ասել թէ անվարձ են. ըստ որում տարեկան երեք րուբլի է նշանակուած:

Գրա կտրվին Հայի լեզու, կրօն և պատմութիւն, մասնաւորապէս Ռուսաց և Պարսից լեզուներ: Թուարանութիւն, եկեղեցական երգեցողութիւն և վայելչագրութիւն:

Աւսուցիչք են սուրբ Հայրը ինքը, սուրբ Էջմիածինէն զրկուած մի սարկաւազ, մի այլ Սարգիս անունով պարոն, և մի ալ Պարսիկ ախունդ որ շարժական երեք դաս ունի:

Աւսումնարանը երկու դասատուէն կրողկանայ, մէկին մէջ 18, իսկ միւսին մէջ 12 աշակերտք կան: Մի քանի օր վանքին հիւր ըլլալով շարունակ գրեթէ զպրոց և եկեղեցին գնացի, դպրոցին մէջ եղած կարգը կանոնը բաւականին օրինաւոր գտայ: Երեխանց մէջ զարթնած տեսայ սէր դէպի ուսումը, դէպի եկեղեցին և դէպի սուրբ Էջմիածին:

Վեհափառ Հօր պատկերը դասատան ճակատին բազմած էր, երեխի մը հարցրի, եղբայր այդ ո՞ւմ պատկերն է գիտես: Մեր Վաթողիկոսի, պատասխանեց երեխան: Ա՞յլ է այդ՝ վերաբերի ես. այս ուսումնարանի բացողը չես գիտար, ասաց երեխան: Նա մեր ինչն է, կրկին հարցրի ես: Հայրերնիս, պատասխանեց երեխան: Մենք նորան համար միշտ ազօժք ենք անում, կրկնեց մէկ ուրիշը:

Չմոռնանք ասել թէ՛ աշակերտաց ժամերգութիւնը եկեղեցւոյ մէջ այնքան կարգին և օրինաւոր էր՝ երգեցողութիւնը այնքան ներդաշնակ և շքեղ էր՝ որ սիրտս հազար և մի սուրբ զգացմունքներով լեցրին, մտացս մէջ բիւրաւոր յիշատակներ կծփար, նախնեաց կենաց պիւքներուն մէջ վերացած կշռէի. զգացմունքս տակնուվրայ կլինէին այն սուրբ տաճարին մէջ մանուկների համաձայն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ կարգից, կանոնից, ծէսից և արարողութեանց աճիւրդ

և զարգանալը աչքիս առաջն ունենալով: Միտքս կգային ականայ այն սուրբ վարդապետները, որոնք երբեմն այդ և այլ սուրբ տաճարների մէջ իւրեանց բոլոր կենքը այդ սուրբ պաշտօնին էին նուիրած:

Այն երանի թէ ընդհանրապէս մենք շատ շուտ հասկանալիք և զգայիք թէ վանքերի իրանց նպատակներնուն ուղիղ կերպով ծառայելը մեզ համար որքան բարձր և թանկ և վսեմ է:

Ես մաղթելով Գ. արդի վանահօր առողջութիւն, բարիք և յաջողութիւն կվերջացնեմ իմ խօսակցութիւնս \*):

Յակոբ Գ. Վարդապետ

1874 Յուլի:

Ի Շուշի:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿԲ ԲԻՒԶԱՆԳԵԱՆ

ՀՆՈՒԹԻՒՆՔ Ի ՏԱՐՈՆՆ՝

– Ասկէց քանի մը տարի առաջ Տարսնի ազգայինք իրենց հին փայտաշէն եկեղեցին նորոգելու և կէս քարաշէն կանգնելու համար՝ երբ եկեղեցւոյ հիմերը կրանան, եկեղեցւոյ խորանին հիման մէջէն երկաթ մնտուկ մը կկշէ. որոյ մէջ Աւոն թագաւորի ադամանդեայ ոսկեղէն թագը, գօտին (քէմեր), արքունական դաւաղանը, մարգարտազարդ հողաթափը, ականակուռ ոսկի թեւնոցը, պարանոցին ոսկի շղթայն՝ որ թագաւորական պատկերը կկրէ, և շատ մը հին ոսկի դրամներ, որոց վերայ մարգարտաճաղիկներ բանուած են. թագին, զաւաղանին, գօտիին, թեւնոցին վրայ ալ պատկերներ և առիւծներ քանդակուած ու մեկմէկ խոշոր ազամանդներ զրուած են վրանին:

Այս դրամներն ալ ըստ վկայութեան զաղղիացի հնագիտի մը խիստ յարգի և ուրիշ հնութիւններէ աւելի զերազանց ըլլալը ծանուցեր է որ նոր հին ատենները ալ նախնի հայ թագաւորական գանձատուները իբրև հնութիւն կպահուին եղեր:

Այս բոլոր անվին հնութիւնները մայրաքաղաքիս մէջ ծախուեր, ոմանք Վեսարացի և ոմանք Զմիւռնիացի երեւելի ազգայինք աւեր են:

(\*) Այս վանքէն մի ժամուայ հեռաւորութեան վերայ կզմուռի կապոյտ բերդը, որին մէջ զժրախա Բաղրատունի Սմբատը ամրացաւ Զուսուփի դէմ: Ես այս բերդին այցելու գնացի, որուն աւերակները մինչև ոչսօր կան եւ կմնան. ե՞նէ ինձ կը յաջողի այս մասին, ուրիշ անգամ կխօսեմ: